

Հաստատված է

ԵՄԽՀ գիտական խորհրդի

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա.Ս.Աղաբաբյան

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1. Հնդհանուր դրույթներ

1.1. **ԵՄՆՀ**-ում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի կառուցվածքի և բովանդակության փոփոխության անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ բարձրագույն կրթության համակարգի՝ բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ընդգրկվելու և բարձրագույն կրթության կազմակերպման եվրոպական չափորոշիչներին համապատասխանեցնելու նպատակադրությամբ, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքի պահանջներով և դրանից բխող՝ **ԵՄՆՀ** գիտական խորհրդի կողմից հաստատված «Մովսես Խորենացու անվան համալսարանում կրեդիտային համակարգի ներդրման ժամանակացույցով», որը նախատեսում է **2007/2008** ուս.տարում իրականացնել անցում դեպի մագիստրոսական կրթության կազմակերպում՝ կրեդիտային համակարգի հենքի վրա:

1.2. **ԵՄՆՀ**-ում մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրի ներկայացվող կառուցվածքի հիմնում դրված է երկու առանցքային գաղափար՝ ա) կրթական ծրագրի կատարման ողջ ընթացքում մագիստրանտի գիտական ղեկավարի դերակատարության շեշտակի բարձրացումը՝ մագիստրանտի ուսումնական խորհրդատուի գործառույթների ընդգրկմամբ, բ) մագիստրանտների կողմից ուսումնական և հետազոտական ծրագրերի ձևավորման և կատարման խնդրում ինֆորմացիայի աստիճանի ավելացումը:

1.3. Կառուցվածքի հիմնում ընկած է ուսանողի շաբաթական ընդհանուր բեռնվածության **45**-ժամյա տևողության ամրագրումը, իսկ ուսումնական մեկ կրեդիտի ժամային համարժեքը հաշվարկվում է **1** կրեդիտ = **30** ժամ համամասնությամբ, ինչն արտացոլում է **ԵՄՆՀ**-ում փաստացի ձևավորված իրողությունը և Բոլոնիայի գործընթացում ընդգրկված մի շարք երկրներում դրանքովուղ միտումը:

1.4. Մագիստրոսի պատրաստման ծրագրի կառուցվածքում նախատեսվում է երկու հիմնական հատված՝ ուսումնական և հետազոտական, որոնցից յուրաքանչյուրով նախատեսված աշխատանքները ներկայացված են մագիստրոսի կրթական ծրագրի իրականացման նորմատիվ ժամկետների շրջանակներում տեղավորվող կիսամյակներում՝ ուսումնական և հետազոտական հատվածների ծավալների հետևյալ համամասնությամբ (%)՝

1.5. Ուսումնական կիսամյակի համար սահմանվում է **20**-շաբաթյա տևողությունը, դրանից **14**-ը հատկացվում է տեսական ուսուցման և պրակտիկաների, իսկ **6**-ը՝ նախապատրաստական գործընթացի և ֆինալ շրջանի:

1.6. Ուսումնական ծրագրի լրիվ աշխատածավալը համապատասխանում է 120 կրեդիտի:

1.7. Ուսանողի շաբաթական ուսումնական լրիվ ծանրաբեռնվածությունը 45 ժամ է, որը համարժեք է 1,5 ակադեմիական կրեդիտի: Առանձին դեպքերում ուսանողների համար սահմանավում է լրացուցիչ ուսումնական բեռնվածություն:

1.8. Կրեդիտը դասընթացով կամ առանձին ատեստավորում ունեցող կրթական այլ մոդուլով (գիտահետազոտական աշխատանք, կուրսային աշխատանք, պրակտիկա) նախանշված ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է: Մեկ մոդուլը համապատասխանում է մեկ կիսամյակ տևողությամբ դասընթացի կամ դասընթացի կիսամյակային այնպիսի հատվածի, որը կարող է ինֆորմալ կերպով ատեստավորվել: Ըստ այդմ կարող են տարբերվել մեկ կամ երկու ու ավելի մոդուլներից բաղկացած դասընթացներ, որոնք ուսումնական պլանում ներկայացվում են առանձին տողերով:

2. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Ուսումնական հատված

2.1.0. Ծրագրի ուսումնական հատվածի կառուցվածքը պայմանավորվում է հետևյալ բաղադրիչների առկայությամբ՝ **Բնագիտական և ընդհանուր և մասնագիտական դասընթացներ, Լրացական նշանակվող դասընթացներ, Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ և Տիտղոսային ծրագրի կանընտրական դասընթացներ**: Առաջին երկուսը սպասարկում են ընդհանուր մասնագիտական հենքի ապահովման կամ համալրման խնդիրները, երրորդը և չորրորդը կազմում են մագիստրոսի կրթական ծրագրի բովանդակային էությունը:

2.1.1. Բնագիտական և ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

Բնագիտական և ընդհանուր մասնագիտական դասընթացների առկայությունը ծրագրում նպատակաուղղված է մագիստրանտների մոտ մասնագիտական խորացված տեսական գիտելիքների և տեղեկատվական—տեխնոլոգիական ունակությունների ապահովմանը: Այն ներառում է երկու պարտադիր դասընթաց՝ *Տեղեկատվական տեխնոլոգիաները մասնագիտական հետազոտություններում և Մասնագիտության արդիական խնդիրները*: Առանձին դեպքերում մասնագիտական անհրաժեշտությունից էլնելով, *Մասնագիտացված պատրաստման դասընթացների* բաղադրիչին հատկացված ժամաֆանակի հաշվին հնարավոր է ընդհանուր և մասնագիտական այլ դասընթացների ընդգրկում:

2.1.2. Լրացական նշանակվող դասընթացներ

Բաղադրիչն ուղղված է նախորդ կրթական աստիճանի պահանջներն անհրաժեշտության դեպքում լրացնելուն (մասնագիտության փոփոխության դեպքում կամ օտար լեզուների իմացության ոլորտում): Նկատի ունենալով թողարկվող մասնագետների՝ կրթական և հետազոտական ծառայությունների միջազգային շուկայում ազատ տեղաշարժն ու պահանջվածությունն ապահովելու անհրաժեշտությունը, որպես պարտադիր լրացական դասընթաց ծրագրում ընդգրկված է անգլերենը: Մասնագիտական անհրաժեշտությունից էլնելով, գիտական դեկավարի երաժիշտությունը մագիստրանտի անհատական ուսումնական պլանում որպես լրացական դասընթաց կարող է ներառվել նաև օտար այլ լեզու: Լրացական դասընթացները կրեդիտատար չեն: Բաղադրիչը յուրաֆանջյուր մագիստրոսական ծրագրում նախատեսում է մինչև **3** լրացական դասընթացի առկայություն:

2.1.3.0. **Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ**: Մագիստրոսական ծրագրի դասընթացների պարտադիր խմբաֆանակն է, որն ապահովում է ծրագրի տիտղոսը

(անվանումը) և որակավորման կառուցվածքը: Ընդգրկում է 8-ից 16 տարբեր կրեդիտատարությամբ մոդուլ-դասընթացներ:

2.1.3.2. Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ: Մագիստրոսական ծրագրի դասընթացների կամընտրական ցանկն է: Դասընթացներն ընտրվում են գիտական ղեկավարի հետ համատեղ՝ 2-րդ կիսամյակում մեկ դասընթաց՝ առաջարկվող մեկ 3 կրեդիտատարությամբ դասընթացներից, 3-րդ կիսամյակում՝ մեկ 3 կրեդիտատար դասընթաց:

2.1.3.3. Հարակից ծրագրերի ընտրովի դասընթացներ: Համապատասխան դասընթացներն ընտրվում են հարակից ծրագրերի տիտղոսային ցանկերից՝ 2-րդ կիսամյակում մեկ 3 կրեդիտատար դասընթաց, 3-րդ կիսամյակում՝ մեկ 3 կրեդիտատար դասընթաց:

2.2. Հետազոտական հատված

2.2.0. Ծրագրի հետազոտական հատվածի կառուցվածքը պայմանավորվում է հետևյալ բաղադրիչների առկայությամբ՝ *Գիտական ղեկավարի սեմինար, Գիտահետազոտական աշխատանք, Գիտահետազոտական պրակտիկա, Գիտամանկավարժական պրակտիկա, Մագիստրոսական թեզի պաշտպանություն:*

2.2.1. Գիտական ղեկավարի սեմինարը գիտական ղեկավարի կողմից իր ղեկավարած մագիստրանտների հետ վարվող սեմինարների շարք է, որի ընթացքում մագիստրանտներին ցուցաբերվում է գիտական հետազոտություն կատարելու մեթոդաբանական և մեթոդական աջակցություն, ձևավորվում է գիտական սեմինարներին հաղորդումներ և գեկուցումներ ներկայացնելու, գիտական բանավեճ վարելու, գրախոսություններով հանդես գալու կուլտուրան:

2.2.2. Գիտահետազոտական աշխատանքի բովանդակությունը պայմանավորվում է ծրագրի համապատասխան կիսամյակում նախատեսվող ուսումնական կազմակերպական ֆայլերով :

2.2.3. Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է չորրորդ կիսամյակում գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում:

2.2.4. Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է չորրորդ կիսամյակում գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Նախատեսում է բակալավրիատում սեմինարների և գործնական պարապմունքների անցկացում, կուրսային աշխատանքների գրախոսում:

2.2.5. Մագիստրոսական թեզի պաշտպանությունը մագիստրոսական թեզի պատրաստման եզրափակիչ փուլն է, որի բովանդակությունը պայմանավորվում է չորրորդ կիսամյակի վերջին 8 շաբաթում իրականացվող ընթացակարգով և ավարտվում թեզի պաշտպանու-թյամբ:

3. ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Ծրագրի իրականացման *առաջին* տարում՝ 1-ին և 2-րդ կիսամյակներում ապահովվում է տարբերացված գիտական մասնագիտացման ուղղությամբ հիմնարար պատրաստումը:

3.1.1. 1-ին կիսամյակն ընդգրկում է հետևյալ ուսումնական հոսանքների փուլերը.

3.1.1.1. Ընտրված ծրագրի ընդհանուր ղեկավարի հետ գիտական ղեկավար նշանակելու վերաբերյալ խորհրդատվություններ:

3.1.1.2. Ամբիոնի կամ (սահմանային/միջամբիոնային) մագիստրոսական ծրագրերի դեպքում) միջամբիոնային հանձնախմբի կողմից մագիստրանտի գիտական ղեկավարի հաստատում:

3.1.1.3. Գիտական ղեկավարի հետ մագիստրոսական թեզի թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում, մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանի կազմում:

3.1.1.4. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.1.1.5. Մագիստրանտի թեզի թեմայի հաստատում:

3.1.2. 2-րդ կիսամյակը նախատեսում է.

3.1.2.1. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համատեղ կիսամյակի անհատական ուսումնական պլանի կազմում:

3.1.2.2. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.1.2.3. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համաձայնեցված հիմնավորված ատենախոսական առաջարկի պատրաստում և ներկայացում ամբիոնում կամ միջամբիոնային հանձնախմբում ֆինալական և հաստատման համար: Ատենախոսական առաջարկը պետք է պարունակի խնդրի առաջադրումն ու սահմանումը, հետազոտական մեթոդների և գիտական ապարատի (գրականության ցանկի) նկարագրումը, հավանական լուծումները:

3.2. Ուսուցման *էրկրորդ* տարում եզրափակվում է մագիստրանտի տեսական խորացված պատրաստումը, կատարվում է

գիտական հետազոտությունը, մագիստրոսական թեզի շարադրումն ու պաշտպանությունը:

3.2.1. Այդ տարվա 1-ին կիսամյակն ընդգրկում է.

3.2.1.1. Մագիստրանտի կողմից գիտական ղեկավարի հետ համատեղ կիսամյակի անհատական ուսումնական պլանի կազմում:

3.2.1.2. Մագիստրանտի կողմից կիսամյակի անհատական ուսումնական պլանի կատարում:

3.2.1.3. Գիտական հետազոտություն (նյութի հավաքագրում, վերլուծում ու համակարգում, տեսական ամփոփումներ)

3.2.2. Երկրորդ կիսամյակում նախատեսվում է.

3.2.2.1. Գիտական ղեկավարի հետ համատեղ գիտահետազոտական պրակտիկայի ծրագրի կազմում և կատարում:

3.2.2.2. Գիտական ղեկավարի հետ համատեղ գիտամանկավարժական պրակտիկայի ծրագրի կազմում և կատարում:

3.2.2.3. Մագիստրոսական թեզի շարադրում:

3.2.2.4. Թեզի ներկայացում ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) ֆննարկմանը: Թեզը ներկայացվում է պաշտպանությունից **8** շաբաթ առաջ և ֆննարկվում ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից երկշաբաթյա ժամկետում:

3.2.2.5. Ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճանը հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ ֆննարկման ներկայացնել այն: Լրացուցիչ ֆննարկման արդյունքում դրական եզրակացության դեպքում թեզը ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) կողմից երաշխավորվում է պաշտպանության և տրվում պաշտոնական ընդդիմախոսին, որը ոչ ուժ, քան պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ մագիստրանտին է ներկայացնում իր գրավոր կարծիքը թեզի վերաբերյալ:

3.2.2.6. Մագիստրոսական թեզի պաշտպանություն Պետական որակավորման հանձնաժողովի նիստում:

Հաստատված է

ԵՄԽՀ գլխավոր խորհրդի

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

Կ Ա Ր Գ

1. Հնդհանուր դրույթներ

1.1. Սույն կարգը սահմանում է Երևանի Մոլսես Խորենացու անվան համալսարանում /ԵՄԽՀ/ մագիստրոսի պատրաստման ծրագրի կրեդիտների հաշվարկման հեղինակ ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնները:

1.2. Այն ընդգրկում է *ընդունելության և ուսումնական գործընթացի կազմակերպման ընթացակարգերը, գիտելիքների գնահատման համակարգը, ինչպես նաև եզրափակիչ ատեստավորման կարգը:*

2. Մագիստրոսական ծրագրում ընդգրկվելու ընթացակարգը

2.1. ԵՄԽՀ-ում առաջարկվող մագիստրոսական ծրագրերից որևէ մեկում ընդգրկվելու համար ներկայացվում

են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրոսի պատրաստման կրթական ծրագրով ուսումնառության համար սահմանված նմուշի հայտ (համապատասխան ձևաթերթ),
- կրթական նախորդ աստիճանի ավարտական փաստաթղթի (դիպլոմի) և նրա հավելվածի բնօրինակներն ու պատճենները,
- երաշխավորագիր տվյալ մասնագիտությամբ նախորդ աստիճանի կրթական ծրագրի կատարումը կազմակերպած ֆակուլտետից,
- 4 լուսանկար (3x4 չափի):

2.2. Հայտը լրացվում է համապատասխան մասնագիտություններով մագիստրոսական ծրագրեր հայտարարած ֆակուլտետներում՝ մագիստրոսական ծրագրերի ուղեցույցին տեղեկանալու և մագիստրոսական ծրագրերի ղեկավարների հետ խորհրդատվություններ ունենալու հիման վրա:

2.3. Լրացված հայտը մյուս պահանջվող փաստաթղթերի հետ ներկայացվում է համալսարանի ուսումնամեթոդական բաժին՝ գիտական խորհրդի կողմից սահմանված ընդունելության կանոնակարգի համաձայն բնութայն առնվելու և որոշում կայացնելու համար:

2.4. Մագիստրոսական ծրագիրը տվյալ ուսումնական տարում գործարկելու համար անհրաժեշտ է դրանում առնվազն 5 մագիստրանտի ընդգրկումը:

3. Ուսումնական գործընթացի կազմակերպման հիմնական փաստաթղթերը

3.1. Ծրագրում գրանցվելուց և հրամանագրվելուց հետո ստեղծվում է մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանը, ուր կատարվում են մագիստրոսական ծրագրի ուսումնական և հետազոտական հատվածների իրականացմամբ պայմանավորված ժամանակացույցով նախատեսվող բոլոր գրանցումները: Դրանք են.

- գիտական դեկավար նշանակելու մասին տվյալները,
- մագիստրոսական թեզի թեման հաստատելու մասին տվյալները,
- մագիստրանտի կիսամյակային անհատական ուսումնական պլանների բովանդակության (դասընթացների ընտրության) և դրանց կատարման մասին տվյալները (Ֆննությունների և դրանց վերահսկման գնահատականները, կուտակած կրեդիտները),
- ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների (գիտահետազոտական աշխատանքի, պրակտիկաների, գիտական դեկավարի սեմինարի) կատարման մասին տվյալները (ատեստավորման արդյունքները և կուտակած կրեդիտները),
- ատենախոսական առաջարկի ներկայացման, ֆննարկման և հաստատման մասին տվյալները,
- մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգի կատարման մասին տվյալները (գիտական դեկավարի կարծիքն ու գնահատականը, մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման երաշխավորությունը, նշանակված ընդդիմախոսի կարծիքն ու գնահատականը, թեզի պաշտպանության գնահատականը):

3.1.1. Մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանը պահվում է համապատասխան մագիստրոսական ծրագրի դեկավարի մոտ, ով պատասխանատու է դրանում նախատեսված բոլոր գրանցումները ժամանակին և ճիշտ կատարելու համար: Մատյանում համապատասխան գրանցումների հիմք են հանդիսանում ծրագրի բովանդակությամբ նախատեսվող բոլոր գործողությունների կատարումը հավաստող փաստաթղթերը՝ դասընթացների գնահատման թերթիկները, հետազոտական մոդուլների ատեստավորման թերթիկները, ուսումնառության անհատական ծրագրերը և այլն: Դրանք բոլորն առկա են լինում երկու օրինակով, որոնցից մեկը պահվում է մագիստրանտի, մյուսը՝ մագիստրոսական ծրագրի դեկավարի մոտ:

3.1.2. Ծրագրի ուսումնական հատվածով նախատեսվող մոդուլների կատարման արդյունքները մատյանում գրանցվում են սահմանված նմուշի գնահատման հատուկ թերթիկների տվյալների հիման վրա: Գնահատման թերթիկները պատրաստվում են երկու օրինակով, որոնցից մեկը պահվում է մագիստրանտի մոտ, մյուսը՝ ներկայացվում ծրագրի դեկավարին՝ մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանում համապատասխան գրանցումը կատարելու և մագիստրանտի անձնական գործում պահելու համար:

3.1.3. Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող մոդուլների կատարման արդյունքները մատյանում գրանցվում են սահմանված նմուշի ատեստավորման թերթիկների և մագիստրոսական թեզի պաշտպանության ընթացակարգով նախատեսվող եզրակացությունների տվյալների հիման վրա: Դրանք նույնպես պատրաստվում են երկու օրինակով, որոնցից մեկը պահվում է մագիստրանտի մոտ, մյուսը՝

ներկայացվում ծրագրի ղեկավարին՝ մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանում համապատասխան գրանցումը կատարելու և մագիստրանտի անձնական գործում պահելու համար:

4. Մագիստրանտի գիտական ղեկավարի նշանակումը և մագիստրոսական թեզի թեմայի հաստատումը

4.1. Մագիստրանտի գիտական ղեկավարի նշանակման ընթացակարգը ներառում է.

4.1.1. Ծրագրի ղեկավարի հետ խորհրդատվությունների անցկացում, որոնց ընթացքում հեղինակում են մագիստրանտի հետազոտական հետաքրքրությունները, կազմակերպվում է հանդիպում տվյալ մագիստրոսական ծրագիրն իրականացնող համապատասխան մասնագետներից մեկի հետ,

4.1.2. Մագիստրանտների գիտական ղեկավարների համաձայնեցված թեկնածությունների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի հաստատմանը, գիտական ղեկավարի նշանակումը և համապատասխան գրանցման կատարումը մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանում:

4.2. Մագիստրոսական թեզի թեմայի հաստատման ընթացակարգը ներառում է.

4.2.1. Գիտական ղեկավարի հետ թեմայի ընտրության վերաբերյալ խորհրդատվությունների անցկացում,

4.2.2. Մագիստրոսական թեզերի թեմաների համաձայնեցված ձևակերպումների ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ամբիոնի (միջամբիոնային հանձնախմբի) հաստատմանը և համապատասխան գրանցման կատարում մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանում:

5. Մագիստրոսական ծրագրի ուսումնական հատվածի կազմակերպման ընթացակարգը

5.1. Ուսումնական օրացույցը և դասընթացների ժամանակացույցը

Յուրաքանչյուր կիսամյակի սկզբում հրապարակվում է (տպագիր տեքստով կամ կայքում տեղադրելով) տվյալ կիսամյակի ուսումնական օրացույցը (ուսումնական գործընթացի կազմակերպման գրաֆիկը), որտեղ ըստ օրերի նշվում են ուսուցման սկիզբը և ավարտը, դասընթացներին գրանցվելու, ֆինալ քննության և արձակուրդի սկիզբը և ավարտը: Հրապարակվում է նաև պարապմունքների դասացուցակը՝ առաջադրվող բոլոր դասընթացների և դրանց ֆինուրությունների կայացման ժամանակացույցը, որը բովանդակում է մանրամասն տեղեկատվություն դասընթացների անցկացման վայրի, օրվա և ժամի, դասախոսի և այլնի վերաբերյալ:

5.2. Լրացական դասընթացներ նշանակելու, դասընթացներին գրանցվելու ընթացակարգերը և մագիստրանտի ուսումնառության անհատական ծրագիրը

5.2.1. Այն մագիստրանտների համար, ովքեր մագիստրոսական ծրագրում գրանցվել և հրամանագրվել են նախորդ կրթական աստիճանի մասնագիտության փոփոխությամբ, ուսումնառության առաջին շաբաթվա ընթացքում կարող են նշանակվել կրթական ծրագրի *Լրացական դասընթացների* բաղադրիչով նախատեսվող դասընթացներ: Լրացական դասընթացներ նշանակելու հարցը համապատասխան

հարցազրույցից հետո առաջադրվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարի կողմից և համաձայնեցվում ամբիոնի վարիչի հետ:

5.2.2. Ուսումնառության երկրորդ և երրորդ կիսամյակների առաջին շաբաթվա ընթացքում մագիստրանտը գիտական ղեկավարի հետ կազմում է տվյալ կիսամյակի **ուսումնառության իր անհատական ծրագիրը**, որում արձանագրվում են ուսումնական պլանի *Տիտղոսային ծրագրի կանընտրական դասընթացների* և *Հարակից ծրագրերի ընտրովի դասընթացների* բաղադրիչներով տվյալ կիսամյակի համար նախատեսվող այն դասընթացները, որոնց մասնակցելու համար նա գրանցվել է: **Ուսումնառության անհատական ծրագիրը** մագիստրանտի անհատական աշխատանքային մատյանի մաս է: Գիտական ղեկավարի երաժխավորությամբ մագիստրանտը կարող է *Հարակից ծրագրերի ընտրովի դասընթացների* բաղադրիչով նախատեսվող դասընթացի փոխարեն գրանցվել *Տիտղոսային ծրագրի կանընտրական դասընթացների* բաղադրիչով նախատեսվող որևէ լրացուցիչ դասընթացի, եթե նախապես հրապարակված ժամանակացույցով դասընթացների կայացման գուգադիպում չի առաջանում: Դասընթացների գրանցման համար սահմանված վերջնաժամկետից հետո երկու շաբաթվա ընթացքում գիտական ղեկավարի երաժխավորությամբ մագիստրանտը կարող է փոփոխություններ կատարել ուսումնառության անհատական ծրագրում, որի մասին նրա անհատական աշխատանքային մատյանում կատարվում է համապատասխան գրանցում: Դասընթացի փոփոխությունը կարող է կատարվել նաև մագիստրոսական ծրագրին իրականացնող ուսումնական ստորաբաժան-ման նախաձեռնությամբ, եթե տվյալ դասընթացում բավարար թվով մասնակիցներ չեն ընդգրկվել: Մագիստրանտի նախաձեռնությամբ դասընթացի փոփոխությունը սահմանված ժամկետից հետո թույլատրվում է միայն դասընթացը վարող դասախոսի համաձայնությամբ, սակայն ոչ ուժ, քան դասընթացն սկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

5.3. Գիտելիքների գնահատման կարգը

5.3.1. Մագիստրանտների գիտելիքների գնահատման համար կիրառվում է համալսարանում գործող 20 միավորի սանդղակը, որն անհրաժեշտության դեպքում վերաձվում է ECTS համակարգում գործածվող ստուային նիշերի: Դասընթացի գնահատման համար գործածվում է գնահատականի աստիճանական կուտակման սկզբունքը:

5.3.2. Գնահատման կառուցվածքը ներառում է.

- ա) դասընթացին մասնակցելու գնահատումը, որի համար սահմանվում է 4 միավոր կամ գնահատման սանդղակի 20%-ը, բ) դասընթացի բովանդակությամբ նախատեսված ուսումնական առաջադրանքների կատարման գնահատումը, որի համար սահմանվող միավորների քանակը որոշվում է դասընթացի աշխատանքներով նախատեսված սանդղակով, սակայն չի կարող գերազանցել 10 միավորի շեմը կամ գնահատման սանդղակի 50%-ը, գ) դասընթացի ավարտական ֆինությունը հանձնելու գնահատումը,

որի համար սահմանվող միավորների ֆանակը նույնպես չի կարող գերազանցել 10 միավորի շեմը կամ գնահատման սանդղակի 50%-ը :

Գնահատման կառուցվածքի ա) գոտին ամրագրված է բոլոր դասընթացների համար, իսկ բ) և գ) գոտիների ենթակառուցվածքը որոշում է դասընթացը վարող դասախոսը (այնպես, որ դրանց թվային արժեքների հանրագումարը կազմի 16 միավոր կամ գնահատման սանդղակի 80%-ը), ինչը պարտադիր կերպով արձանագրվում է դասընթացի՝ մագիստրոսական ծրագրի ուղեցույցում գետեղված նկարագրության մեջ: Դասընթացի գնահատման կառուցվածքի փոփոխություններ ուղեցույցի հրապարակումից հետո չեն թույլատրվում:

5.3.3. Գնահատման թերթիկում դասախոսի կողմից մինչև դասընթացի ավարտական ֆինուրյան սկիզբը լրացվում են ա) և բ) գոտիներով նախատեսվող գնահատումների արդյունքները, իսկ ֆինուրյան անցկացնելուց հետո՝ նաև վերջինիս արդյունքները թվերով և տառերով: Անհատական ուսումնական ժամանակացույցով ուսանող մագիստրանտների՝ դասընթացին մասնակցելու համար տրվող միավորների ֆանակը հասվարկվում է ինֆուրյան աշխատանքի կատարողականի հիման վրա:

5.3.4. Քննությունը համարվում է հանձնված, եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գերազանցում է 8 միավորը կամ գնահատման սանդղակի 40 տոկոսը: Եթե դասընթացի գնահատման ամբողջական արդյունքը գտնվում է 5-7 միավորի տիրույթում, ապա թույլատրվում է դասընթացի վերահանձնում: Նույն կիսամյակի ընթացքում մագիստրանտն ունի յուրաքանչյուր այդպիսի դասընթաց վերահանձնելու ընդամենը մեկ հնարավորություն: 4 միավոր և ցածր արդյունք ցուցաբերած մագիստրանտը պարտավոր է կրկնել դասընթացը: Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին 2 դասընթաց չհանձնած մագիստրանտներին հնարավորություն է տրվում կրկնել դասընթացները հաջորդ աշխատանքային կիսամյակում՝ շարունակելով ուսումը երկրորդ կիսամյակում: Երկրորդ և երրորդ կիսամյակներում որևէ դասընթաց չհանձնած մագիստրանտները հեռացվում են համալսարանից: Հեռացված ուսանողների վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ: Դրական գնահատված դասընթացի վերահանձնում չի թույլատրվում:

5.3.5. Քննությունն ավարտելուց հետո գնահատման թերթիկի մեկ օրինակը հանձնվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին, իսկ մյուսը տրվում է մագիստրանտին:

6. Մագիստրոսական ծրագրի հետազոտական հատվածի կազմակերպման ընթացակարգը

6.1. Հետազոտական մոդուլների ժամանակացույցը

Յուրաքանչյուր կիսամյակի երկրորդ շաբաթվա ընթացքում ծրագրի ղեկավարը կազմում և մագիստրանտներին է ներկայացնում տվյալ կիսամյակի հետազոտական օրացույցը (ծրագրի հետազոտական հատվածով նախատեսվող կրթական մոդուլների կազմակերպման գրաֆիկը): Այն, ըստ կիսամյակի բովանդակության, ներառում է գիտական ղեկավարի սեմինարների և պրակտիկաների կատարման ժամանակացույցները:

6.2. Ատեստավորման կարգը

Ծրագրի հետազոտական հատվածով նախատեսված կրթական մոդուլների հաշվետվության համար կիրառվում է ատեստավորման եղանակ: Գիտական ղեկավարի սեմինարների և պրակտիկաների, ինչպես նաև ինֆորմացիոն գիտահետազոտական աշխատանքների ատեստավորումը կատարում է մագիստրանտի գիտական ղեկավարը: Ատեստավորման թերթիկի մեկ օրինակը հանձնվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին, իսկ մյուսը տրվում է մագիստրանտին:

Ուսումնառության առաջին կիսամյակի ավարտին ծրագրի համապատասխան հետազոտական մոդուլից ատեստավորում չստացած մագիստրանտներին հնարավորություն է տրվում շարունակելու ուսումը երկրորդ կիսամյակում՝ այդ ընթացքում կատարելով չատեստավորված մոդուլով նախատեսվող աշխատանքը: Երկրորդ և երրորդ կիսամյակներում որևէ մոդուլով չատեստավորված մագիստրանտները հեռացվում են համալսարանից:

7. Ծրագրի եզրափակիչ ատեստավորման կազմակերպումը

7.1. Եզրափակիչ ատեստավորման ընթացակարգը

Ծրագրի եզրափակիչ ատեստավորման կազմակերպման համար հատկացվում են ուսումնառության վերջին 8 շաբաթները, որոնց ընթացքում նախատեսվում է.

- ա) թեզի ներկայացում մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման ֆիննարկմանը: Թեզի հետ ներկայացվում է գիտական ղեկավարի կարծիքը, որը ներառում է մագիստրանտի աշխատանքի հիմնավորված գնահատական, բ) մագիստրոսական ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանման կողմից պաշտոնական ընդդիմախոսի նշանակում,
- գ) մագիստրոսական թեզի աշխատանքային ֆիննարկում մագիստրոսական ծրագրի ղեկավարի, մագիստրանտի գիտական ղեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի կողմից՝ մագիստրանտի մասնակցությամբ: Էական դիտողությունների առկայության դեպքում մագիստրոսի աստիճան հայցողը պարտավոր է երկշաբաթյա ժամկետում վերամշակել թեզը և լրացուցիչ ֆիննարկման ներկայացնել այն: Եզրակացության մեջ նշվում է թեզի հիմնավորված գնահատականը:
- դ) Մագիստրոսական թեզի պաշտպանություն Պետական որակավորման հանձնաժողովի նիստում և մագիստրոսի աստիճանի շնորհում:

7.2. Ծրագրի ավարտական պահանջները

Որակավորում ստանալու համար մագիստրանտը պետք է ծրագրի կատարման ընթացքում կուրսակի 72 կրեդիտ ուսումնական հատվածից (այդ թվում՝ 54 կրեդիտ պարտադիր դասընթացներից և 18 կրեդիտ կամընտրական դասընթացներից) և 48 կրեդիտ հետազոտական հատվածից:

7.3. Մագիստրոսական թեզի գնահատման կարգը

Մագիստրոսական թեզի գնահատման համար կիրառվում է եռանիշ համակարգ՝ «բավարար», «լավ», «գերազանց» գնահատականներով, որոնք՝ 20 միավորի սանդղակով վերահաշվարկելու համար կիրառվում են ամրագրված համարժեքներ՝ «բավարար»՝ 12, «լավ»՝ 17, «գերազանց»՝ 20:

Գնահատականը գոյանում է գիտական դեկավարի, պաշտոնական ընդդիմախոսի և պաշտպանության ընթացքում թեզի ներկայացման և դրա շուրջ արված հարցադրումներին տրված պատասխանների գնահատումների հիման վրա: